Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր
համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 05-ի
թիվ 205-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 1.4 գործակցի կիրառմամբ՝ 21000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ.

բ. սույն կետի, «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200–ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 1.4 գործակցի կիրառմամբ՝ 42000 /քառասուներկու հազար/ ՀՀ դրամ.

-500–ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 1.4 գործակցի կիրառմամբ՝ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ.

-1000–ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 2.0 գործակցի կիրառմամբ՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.

-3000–ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն

մանված դրույքաչափը հաշվարկել 1.5 գործակցի կիրառմամբ 150 000 /հարյուր
ուն հազար/ ՀՀ դրամ.

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 2.0 գործակցի կիրառմամբ՝ 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ.

-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 2.0 գործակցի կիրառմամբ՝ 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 2.0 գործակցի կիրառմամբ՝ 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի, «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 2.0 գործակցի կիրառմամբ՝ 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ. որի նկատմամբ կիրառվում է 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ. և 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ստացված դրույքաչափը գյուղական բնակավայրում հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

4.2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 /տասներեք հազար/ ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ,

-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ մանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 /տասներեք հազար/ ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 /քսանհինգ հազար/ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար 350 /երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որի նկատմամբ կիրառվում է 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

. խաղափների համար՝ 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 150000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, որի նկատմամբ կիրառվում է 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 225 000 /երկու հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

10) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինություններ ների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 10000 /տասը հազար/ՀՀ դրամ,

- 50ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 20000 /քսան հազար/ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 30000 /երեսուն հազար/ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ, որի նկատմամբ կիրառվում է 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 1000 /մեկ հազար/ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 2000/երկու հազար/ ՀՀ դրամ,

- 50ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 4000 /չորս հազար/ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 8000 /ութ հազար/ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ՀՀ դրամ,

11) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված փնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝5000 /հինգ հազար/ՀՀ դրամ.

12) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ՀՀ դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ՀՀ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ ՀՀ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 /երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ,

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 150 /մեկ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

13) համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 /հարյուր հազար/ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 /տասը հազար/ՀՀ դրամ.

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ՀՀ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ՀՀ դրամ,

գ. 7 հա –ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 /յոթ միլիոն/ՀՀ դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տասը միլիոն/ՀՀ դրամ:

17) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ՀՀ դրամ,

18) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝
ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ, որի նկատմամբ կիրառվում է 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ.
բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 300000 /երեք հարյուր հազար/ՀՀ դրամ: